



Գերմանիայի քաղաքացի հանդիսացող երեխայի հետ միավորվելու կարգը (միայն Գերմանիայի համար)

Դիմելու կարգը

Դիմում ներկայացնելու համար անհրաժեշտ է **նախապես հերթագրվել**: Հերթագրվել հնարավոր է **քացառապես առցանց**: Հերթագրման առցանց համակարգ կարող եք մուտք գործել դեսպանության կայքով՝ www.eriwan.diplo.de

Փաստաթղթերը հանձնելուց հետո գործերի քննության և մշակման համար պահանջվում է առնվազն **6-12 շաբաթ** (կախված է Գերմանիայում գործի քննման ժամկետից): Առանձին դեպքերում կարող է տևել ավելի երկար:

Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար վիզայի վճարը կազմում է 75 եվրո: **Այն պետք է մուծել փաստաթղթերը հանձնելիս՝ համարժեք ՀՀ դրամով**: Անչափահասները վճարում են 37,50 եվրոյին համարժեք ՀՀ դրամ:

Վիզայի համար գանձվող վճարը Հայաստանի Հանրապետության քաղաքացիների համար կազմում է 75 եվրո (անչափահասների համար՝ 30 եվրո), որը վճարվում է դրամով՝ դիմում հանձնելիս:

Դիմումին կից փաստաթղթեր

Դիմում հանձնելիս անհրաժեշտ է **անձամբ** ներկայացնել ստորև նշված փաստաթղթերը: Սկզբունքորեն բոլոր փաստաթղթերը պետք է ներկայացնել **բնօրինակով**, յուրաքանչյուրից նաև՝ **երկուական պատճեն**:

Խնդրում ենք ուշադրություն դարձնել, որ փաստաթղթերը պատուհանի մոտ պետք է հանձնել **երկու նույնական փաթեթով** (յուրաքանչյուր փաթեթը սկսվում է դիմում-հարցաթերթիկով և պարունակում ստորև թվարկված փաստաթղթերի պատճենները)՝ դասավորելով նշված հերթականությամբ:

Բոլոր փաստաթղթերը (հատկապես անձնագրի պատճենները) անհրաժեշտ է ներկայացնել **A4 ֆորմատի** թղթի վրա: Խնդրում ենք թղթերը **չկարել, չամրացնել**: Դեսպանությունը հասցեագրված ֆաքսերը կամ գրությունները չեն տեսակավորվում և չեն կցվում գործերին: Ոչ լիարժեք դիմումներ չեն ընդունվում:

Դեսպանությունն իրեն իրավունք է վերապահում պահանջելու հավելյալ փաստաթղթեր: Լիարժեք դիմում ներկայացնելը դեռևս բավարար հիմք չէ վիզա ստանալու համար:

Դեսպանությունը ուշադրություն է հրավիրում այն հանգամանքին, որ, համաձայն Կացության մասին օրենքի 82-րդ հոդվածի, յուրաքանչյուր դիմումատու ունի համագործակցության պարտավորություն, և չներկայացված փաստաթղթերի պարագայում դեսպանությունը ենթադրում է, որ հնարավոր չի եղել ապացույց ներկայացնել:

Անհրաժեշտ փաստաթղթեր

- գերմաներենով կամ անգլերենով, **բոլոր հարցերին հստակ պատասխաններով լրացրած** երկու դիմում-հարցաթերթիկ: Այն կարող եք գտնել մեր ինտերնետային էջում՝ <https://videx-national.diplo.de>
- 3 նոր, բիոմետրիկ լուսանկար, երկուսը խնդրում ենք սուսնձել դիմում-հարցաթերթիկներին
- վավերական ճամփորդական անձնագիր՝ ելքի թույլտվությամբ, որը վավերական լինի դեռ առնվազն վեց ամիս (անձնագիրը պետք է ունենա առնվազն երկու ազատ էջ և չպետք է 10 տարուց հին լինի)
- անձնագրի բոլոր այն էջերի պատճենները, որոնք պարունակում են կնիք, վիզա և նշումներ (2 օրինակ)
- ստորագրված հայտարարություն կեղծ տվյալների վերաբերյալ (տե՛ս դիմում-հարցաթերթիկը)
- եթե երեխան ծնվել է Գերմանիայում՝ գերմանական ծննդյան վկայականը: Եթե երեխան չի ծնվել Գերմանիայում՝ երեխայի միջազգային ծննդյան վկայականը, որի մեջ նշված է նաև հայրը, ապոստիլով + երկու պատճեն
- երեխայի գերմանական անձնագրի կամ ճամփորդական անձնագրի պատճենը (2 օրինակ)
- երեխայի ընթացիկ գրանցման վայրի վկայականի պատճենը (2 օրինակ),
- Գերմանիայում ապրող ծնողների գերմանական անձնագրի կամ ճամփորդական անձնագրի կամ կացության վկայականի + 2 պատճեն,
- եթե երեխայի ծնվելու պահին ծնողների ամուսնությունը եղել է գրանցված՝ ծնողների միջազգային ամուսնության վկայականը + 2 պատճեն
- եթե երեխայի ծնվելու պահին ծնողների ամուսնությունը չի եղել գրանցված՝ հայրության ճանաչման վկայականը և խնամատարության մասին հայտարարությունը + 2 պատճեն
- եթե ծնողներն ամուսնալուծված են՝ ամուսնալուծության վերաբերյալ վճիռը կամ խնամատարության մասին դատարանի կայացրած որևէ այլ վճիռ + 2 պատճեն

Գերմանիայի քաղաքացի հանդիսացող՝ չծնված երեխայի հետ միավորվելու կարգը

- հղիությունը հաստատող բժշկական տեղեկանք՝ ծննդյան մոտավոր նշումով, երկու օրինակից,
- այն ծնողի Գերմանիայի քաղաքացիությունը հաստատող ապացույց (օրինակ՝ Գերմանական ճամփորդական անձնագիր, քաղաքացիություն ստանալու վերաբերյալ վկայական, քաղաքացիությունը հաստատող փաստաթուղթ), որի միջոցով երեխան ձեռք է բերելու Գերմանիայի քաղաքացիություն, երկու օրինակից
 1. **Եթե դուք ամուսնացած եք ԳԴՀ քաղաքացի հանդիսացող ծնողի հետ՝ ամուսնության վկայական**
 2. **Եթե ամուսնացած չեք ԳԴՀ քաղաքացի հանդիսացող ծնողի հետ,**
 - **երեխայի հետ միավորվել ցանկացող մայրը պետք է ունենա**
 - հոր կողմից տրված հայրության ճանաչման վկայական
 - մոր համաձայնությունը հայրության ճանաչմանը
 - **երեխայի հետ միավորվել ցանկացող հայրը պետք է ունենա**
 - հայրության ճանաչման վկայական

- համատեղ ծնողական խնամք իրականացնելու վերաբերյալ հայտարարություն
- մոր համաձայնությունը այս երկու հայտարարություններին

Կարևոր ցուցումներ

Ձեր ուշադրությունն ենք հրավիրում այն հանգամանքի վրա, որ **դեսպանության շենքում հյուպատոսական բաժնի պատուհանի մոտ** գանձվող այցագրի վճարից բացի այցագրի համար դիմելիս այլ վճար նախատեսված չէ:

Դեսպանությունը **չի համագործակցում** որևէ տուրիստական ընկերության հետ: Դա վերաբերում է նաև դեսպանության անմիջական հարևանությամբ գտնվող ծառայություններ մատուցող գրասենյակներին: Ճամփորդական կամ այլ ծառայություններ մատուցող գրասենյակների աշխատակիցների պնդումներն այն մասին, որ իրենք համագործակցում են դեսպանության հետ, **չի համապատասխանում իրականությանը:**

Ոչ ոք չի կարող ազդել Ձեր դիմումի հաջողության հեռանկարի վրա, քանի որ դիմումների վերաբերյալ որոշում է կայացնում բացառապես գերմանացիներից բաղկացած անձնակազմը: **Եթե Ձեզ այլ բան են խոստանում, ապա Ձեզ փորձում են խաբել: Ոչ մի դեպքում փող մի' վճարեք:**

Այցագրի հետ կապված հարցերի մասին արժանահավատ տեղեկություններ Դուք կարող եք անվճար ստանալ դեսպանության **հյուպատոսական բաժնի աշխատակիցներից:** Այլ անձինք տեղեկություններ տրամադրելու իրավասություն չունեն: